նախապէս ասնում են նրա համաձայնութիւնը և ապա պաշտօնապէս խնդրում նրա ձեռքը սկեսուրից կամ սկեսրայրից։

Հարսանիք Փէրիայում հարսանիքի ծէսը շատ բարդ է և կապուած է մեծ ծախսերի հետ։ Հարսանիքի տէրը ստիպուած է տեղական սովորութեան համաձայն հիւրասիրել ոչ միայն իր մօտիկ ազգականներին, այլ և ամբողջ գիւղի ժողովրդին, նոյնպէս և մերձակայ գիւղերից շատ-շատերին։

Ընդհանրապէս հարսանիքները տեղի են ունենում ձմեռը, Հոկտեմբերից մինչև Փետրուար, մանաւանդ Բարեկենդանի օրերին։

Սովորաբար սկսում են Հինգշաբթի օրը և աւարտում Երկուշաբթի կամ Երեքշաբթի։ Հինգշաբթի առաւօտեանից թէ թագաւորի և թէ հարսնայի տանն սկսում են հարսանիքի պատրաստութիւնները տեսնել. այդ օրն երկու կողմից ընտրուած ջահիլներ շրջում են գիւղի տները և գիւղացիներին հարսանիքի հրաւիրում։ Ուրբաթ առաւօտեան թագաւորի տունն են ժողովւում հրաւիրուածները, ուր թէյ խմելուց յետոյ մի-երկու ժամ անց, 10—12 պատրաստուած մատուցարաններ, որոնց մէջ լինում է օրինակ՝ 8 լիտր բրինձ, 6 լիտր ջամիչ, 2 լիտր իւղ, 4 լիտր զանդ, 1 կամ 2 ոչխար՝ վերցնելով զուռնայի և թմբուկի նուագածութեամբ ջահիլ հարսներն ու աղջիկները մետաքսէ թաշկինակները ձեռքերին, հանդիսականների առջևից պարելով՝ դիմում են հարսնացուի տունը, ուր մի հոգի դուռը բռնում է և թոյլ չէ տալիս ներս մտնելու, մինչև որ աղջկայ հայրը մի կամ երկու զռան փող չտայ։ Այստեղ թէյ խմելուց ու պարելուց յետոյ խմբովին զուռնայով պարելով և երգելով գնում են խաչեղբօր (քաւորի) տունը։ Խաչեղբայրը տանը պատրաստուել, սպասում է, որովհետև նախընթաց օրը փեսացուի տանից յայտնել են նրան այդ մասին։ Խաչեղբօր համար իբրև նեէր տանում են մատուցարանի մէջ դրուած մի գլուխ շաքար, որի մօտ խաչեղբօր հայրը գնում է մի այլ գլուխ շաքար և յետ ուղարկում «թագաւորին» (փեսացուին)։ Խաչեղ-